


Gulden Eelgk

19 02



L-i-F.

132



ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀՆՉԱԿԵԱՆ, ՅԻԴԱՓՈԽԱԿԱՆ, ԿՈՒԱԿՑՈՒԹԵԱՆ,

ԱՐԵՐԻԿԱՅԻ Նահանգային Շրջանակին



ՊԱՍԴԱՆ

Տպագր. «Զայն Հայրենեաց» ի

1902


1/47 925/

անոնագիր հնչակյան
կուսակցության •

399.14(47.925)

4-20

✓



ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀՆՉԱԿԵԱՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱԲԻԱՆԳԴԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻՆ

Տեսակ





A 18897

ՊՈՍԴՈՆ

Տպագր. «Զայն Հայրենեաց» ի

1902







ՀՆՉԱԿԵԱՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱԺԵՐԻԿԱՅԻ ՆԱԲԱՆԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻՆ

ՊԱՏԳԱՄԱԿՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՅՕԴՈՒԱԾ 1. — Պատգամաւորական ժողովը Ա-
մերիկայի Հնչակեան մասնաճիւղերու օրէնսդիր,
համարառու և զեկավար մարմինն է :

ՅՕԴ. 2. — Պատգ. ժողով կը գումարուի վեց
ամիսը անգամ մը, և կզբաղի ընդհանուր շրջանա-
կին վերաբերեալ խնդիրներով :

ՅՕԴ. 3. — Պատգ. ժողովը կը կազմուի Ամերի-
կայի Հնչ. մասնաճիւղերու կողմէ ընտրուած ներ-
կայացուցիչներէն :

ՅՕԴ. 4. — Պատգամաւորները կը նախագահուին հե-
տեւեալ համեմատութեամբ : Հինգէն մինչև 30 ան-
գամ ունեցող մասնաճիւղ մը մէկ պատգամաւոր դըր-
կելու իրաւունքը ունի . 31էն մինչև ~~99~~ անդամ ունե-
ցողը՝ երկու պատգամաւոր . ~~100~~ 100 անդամ
ունեցողը՝ երեք պատգամաւոր : Ասկից անդին ան-
դամներու թուոյն յաւելումը նոր ձայնի իրաւունք
չ'տար մասնաճիւղի մը :

Ամէն մասնաճիւղ մէկ խորհրդատու դրկելու ի-
րաւունքը ունի :

ՅՕԴ. 5. — Մէկ պատգամաւոր միայն մէկ ձայն
կրնայ ներկայացնել :

ՅՕԴ. 6. — Պատգ. Ժողովը օրինաւոր կը համարուի, երբ մասնաճիւղերու մեծամասնութիւնը ներկայացուած է:

ՅՕԴ. 7. -- ՀՆՀ. Կուսակցութեան տեղական մասնաճիւղի մը անդամ չեղող ու է անձ պատգամաւոր չի կրնար ընտրուիլ:

ՅՕԴ. 8. — Թէ՛ Պատգ. Ժողովը և թէ՛ Նահանգային Վարչութիւնը իրաւունք ունի ժողովին հրաւիրել ՀՆՀ. ընկերներ որ իր շրջանակին մէջ կը գըտնուին: Այսպիսի ընկերներ միայն խորհրդատու կը համարուին՝ առանց քուէի իրաւունքի:

ՅՕԴ. 9. — Պատգ. Ժողովը իրաւունք ունի ու է տեղական մասնաճիւղի ներքին գործերուն միջամլտել, երբ ներկայ եղող պատգամաւորներու երկու երրորդը պահանջէ:

ՅՕԴ. 10. — Պատգ. Ժողովոյ մէջ տրուած որոշումները պարտաւորիչ են իր շրջանակի մասնաճիւղերուն՝ ինչպէս նաև Նահանգային Վարչութեան համար:

ՅՕԴ. 11. — Պատգ. Ժողովը քուէատու անդամներու մեծամասնութեան գաղտնի քուէովը կընտրէ եօթը անդամներէ բաղկացեալ Նահ. Վարչութիւն մը:

ՅՕԴ. 12. — Տեղական մասնաճիւղի մը անդամ չեղող ու է անհատ Նահանգային Վարչութեան անդամ չի կրնար ընտրուիլ:

ՅՕԴ. 13. — Արտասովոր Պատգ. Ժողով կը գումարուի՝

Ա. Երբ մասնաճիւղերու մեծամասնութիւնը պահանջէ.

Բ. Երբ Նահ. Վարչութիւնը հարկ տեսնէ .

Դ. Երբ Նահ. Վարչութիւնը լուծուած լինի .

Դ. Երբ Կեդր. Վարչութիւնը հրահանգէ :

ՅՕԴ. 14. — Պատգ. Ժողովը տարեկան զինուորական օլարտաւորիչ տուրք մը կը դնէ իր շրջանակի անդամներուն վրայ . Պատգ. Ժողովը ինք կորոշէ տարեկան տուրքին քանակը :

Սոյն տուրքէն կը հոգացուին նաև շրջանակին ընդհանուր ծախքերը :

ՅՕԴ. 15. — Պատգ. Ժողովը պարտաւոր է շրջանակի ընդհանուր վիճակացոյցին ինչպէս նաև հաշուեցուցակին ամփոփումը՝ օրինաւոր ձևով ներկայացնել Կեդր. Վարչութեան :

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 16. — Նահանգային Վարչութիւնը մասնաճիւղերու և Կեդր. Վարչութեան միջև տեղի ունենալիք յարաբերութեանց միջնորդն է, ներկայ կանոնագրութեամբ իրեն գծուած իրաւասութեան սահմանին մէջ :

ՅՕԴ. 17. — Յանուն Ամերիկայի Նահ. Շրջանակի ամէն պաշտօնական յարաբերութիւն կը կատարուի Նահ. Վարչութեան ձեռքով :

ՅՕԴ. 18. — Նահ. Վարչութեան անդամները թէ հաւաքար և թէ անհատաբար պատասխանատու են Շրջանակի Պատգ. Ժողովին՝ իրենց բոլոր գործառնութեանց համար :

ՅՕԴ. 19. — Նահ. Վարչութեան բոլոր որոշումները կը տրուին ժողովով . անոնց գործադրու-

թիւնը կը կատարուի աշխատութեան բաժանումով : Նահ . Վարչութիւնը ինք կ'ընտրէ իր մէջէն , Ատենապետ մը , Ատենադպիր մը , Կնքապահ մը և Գանձապետ մը :

ՅՕԴ . 20. — Ատենապետին պաշտօնն է ,

Ա . Որոշեալ ժամանակներ ի նիստ գումարել Նահ . Վարչութիւնը : Բ . Տրուած որոշումներուն ճիշդ գործադրութեանը հսկել : Գ . Պաշտօնական ամէն յարաբերութիւններու մէջ իր ստորագրութիւնը ունենալ ուրիշ պաշտօնակցի մը հետ :

ՅՕԴ . 21. — Ատենադպրին պաշտօնն է ,

Ա . Ժողովներու ատենագրութիւնները արձանագրել մասնաւոր տետրակի մէջ : Բ . Ընդհ . թրղթակցութիւնը կատարել : Գ . Նահ . Վարչութեան եկած բոլոր գրութիւնները ստանալ և բանալ գէթ պաշտօնակցի մը ընկերակցութեամբ , ասոնց համար կանոնաւոր արձանագրութեան տումար ունենալ . Եկած թուղթերուն պահպանման պատասխանատու ըլլալ : Դ . Ատենապետին հետ իր ստորագրութիւնը ունենալ ամէն պաշտօնական յարաբերութիւններու մէջ :

ՅՕԴ . 22. — Կնքապահին պաշտօնն է ,

Նահ . Վարչութեան կնիքին աւանդապահը ըլլալ և զայն դնել ամէն պաշտօնական թուղթերուն ներքե : Կնիք չի կրող գրութիւններ պաշտօնական հանգամանք չունին :

ՅՕԴ . 23. — Գանձապետին պաշտօնն է ,

Ա . Ստանալ Նահ . Վարչութեան անունին եկած դրամները և ընկալագիր տալ : Բ . Նահ . Վարչութեան պաշտօնական ծախքերը ընել : Գ . Իր տորագրութիւնը դնել դրամական գործողութեանց

վերաբերեալ բոլոր թուղթերուն տակ : Դ . Ելեմուտքի կանոնաւոր տետրակ ունենալ : Ե . Իր ձեռքով դրկուած դրամներուն ընկալագրերը ստանալ և ներկայացնել Պատգ . Ժողովին :

ՅՕԴ . 24 . — Մասնաճիւղերը իրենց ընդհանուր տուրքերու և հանգանակութեանց արդիւնքը կը զբրկեն Նահ . Վարչութեան , որ շրջանակի ընդհանուր ծախքերը հոգալէ ետք՝ մնացեալը տրամադըրելի կընէ Կուսակցութեան ընդհանուր գործերուն կեղր . Վարչութեան հրահանգով :

ՅՕԴ . 25 . — Նահ . Վարչութիւնը գիտակից կը պահէ մասնաճիւղերը Կուսակցութեան ընդհ . գործունէութեան վերաբերեալ խնդիրներուն՝ (չափաւոր սահմանի մը մէջ , իր յարմար դատած եղանակով) :

ՅՕԴ . 26 . — Նահ . Վարչութիւնը մասնաճիւղերու ներքին գործերուն չի խառնուիր իրեւ ընդհանուր սկզբունք , ի բաց առեալ՝ Ա . Երբ մասնաճիւղի մը ընթացքը Կուսակցութեան սկզբունքները կը հակասէ կամ չահերը կը վտանգէ : Բ . Երբ մասնաճիւղ մը ինքն իր գործերուն համար Նահ . Վարչութեան միջամտութիւնը կը խնդրէ : Գ . Երբ մասնաճիւղերու մեծամասնութիւնը միջամտութիւն կը պահանջէ : Դ . Երբ կեղր . Վարչութիւնը միջամտութիւն կը հրահանգէ :

ՅՕԴ . 27 . — Նահ . Վարչութեան անդամները թոշակ չեն ընդունիր , սակայն Վարչութեան պաշտօնական ծախքերը կը հոգացուին մասնաճիւղերու կողմէն :

ՅՕԴ . 28 . — Պատգ . Ժողովսերու արձանագըրութիւնը , Ժողովոյ դիւանին կողմէն ստորագրութիւնը :

ուած և Նահ . Վարչութեան կնիքովը կնքուած՝ կը զրկուի Կեդր . Վարչութեան :

ՅօԴ . 29 . — Նահ . Վարչութիւնը համարատու է շրջանակի Պատգ . Ժողովին , ուստի անոր անդամները պարտին ներկայ գտնուիլ Պատգ . Ժողովի նիստերուն : Իսկ եթէ Վարչութեան բոլոր անդամներու ներկայութիւնը անկարելի ըլլայ բանաւոր պատճառներով , Վարչութեան դիւանի ներկայութիւնը անհրաժեշտ է : Այս վերջինը՝ Վարչութեան վեց ամսեայ տեղեկագիրը և հաշուեկշիռը պարտի ներկայացնել Ժողովին , օրինական ձեռվ և տոմարով :

ՅօԴ . 30 . — Նահ . Վարչութեան անդամ ընտըրուող իւրաքանչիւր անհատ պարտի Պատգ . Ժողովոյ առջև երդնուլ հաւատարիմ մնալու կուսակցութեանս սկզբունքներուն և շահերուն :

ՅօԴ . 31 . — Նահ . Վարչութիւնը լուծուած կը համարուի , երբ անոր անդամոց թիւը չորսէն պակաս է : Այն պարագային՝ երբ մէկ , երկու կամ երեք անդամներ միայն պակսած են , Վարչութիւնը՝ հրաժարեալ անդամներու թիւը լրացնելու համար , ընտրելիներու եռապատիկ ցանկ մը կը ներկայացնէ մասնաճիւղերուն հանդերձ կենսագրական տեղեկութիւններով , որմէ կը լրացուի պակասը՝ ընտրողական դրութեամբ :

ՅօԴ . 32 . — Նահ . Վարչութեան անդամները չեն կարող ու է մասնաճիւղի ձայն ներկայացնել Պատգ . Ժողովին մէջ :

ՅօԴ . 33 . — Նահ . Վարչութեան պաշտօնավարութեան շրջանը կը տեսէ մէկ տարի , և վերընտրելի է :

ՅՕԴ. 34. — Նահ. Վարչութեան բոլոր անդամները կը մասնակցին Պատգ. Ժողովոյ գործառնութիւններուն, բայց դիւանը միայն — Ատենապետ, Ատենադպիր և Գանձապետ — իրաւունք ունի պատգամաւորներու հաւասար քուէ տալու, ի բաց առեալ իրենց համարատութեան վերաբերեալ խընդիրներուն մէջ :

ՅՕԴ. 35. — Նահ. Վարչութիւնը՝ պարտի Պատգ. Ժողովի գումարումէն մէկ ամիս առաջ իմաց տալ մասնաճիւղերուն Ժողովի գումարման տեղը և ժամանակը, Բացառութիւն են արտասպառ Ժողովները :

ՄԱՍՆԱՃԻՂԵՐ

ՅՕԴ. 36. — Հինգ անդամներէ բաղկացեալ Հնչ. Խումբ մը օրինաւոր մասնաճիւղ մը կազմելու թիւը կը ներկայացնէ :

ՅՕԴ. 37. — Նորակազմ մասնաճիւղ մը օրինաւոր գոյութիւն կ'ստանայ այն ատեն միայն, երբ անոր կազմութիւնը Նահ. Վարչութենէն կը վաւերացուի, Նահ. Վարչութիւնը նորակազմ մասնաճիւղին կազմութիւնը կը ծանուցանէ կեդր. Վարչութեան:

ՅՕԴ. 38. — Պատգ. Ժողովը ինք կը գծէ միակերպ կանոնագիր մը իր Շրջանակի մասնաճիւղերուն համար :

ՅՕԴ. 39. — Մասնաճիւղ մը ազատ է ուղղակի թղթակցութեան մտնել կեդր. Վարչութեան

Հետ, երբ մասնաւոր խնդիրներու նկատմամբ Նահ. Վարչութենէն գոհացուցիչ պատասխան չստանայ:

Յ0Դ. 40. — Մասնաճիւղերը պարտաւոր են իրենց վեցամսեայ վիճակացոյցը և հաշուեկշիռը գըրաւոր կերպով ներկայացնել Պատգ. Ժողովին:

Յ0Դ. 41. — Պատգ. Ժողովոյ մասնաճիւղերու վրայ դրած նիւթական պարտականութիւնը բնաւ չի կատարող մասնաճիւղեր՝ յաջորդ Պատգ. Ժողովոյ մէջ ձայն ունենալէ կը զրկուին, ի բաց առեալ երբ Պատգ. Ժողովը թերացման պատճառները քննելով բանաւոր կը գտնէ զանոնք:

Յ0Դ. 42. — Մասնաճիւղ մը լուծուած կը համարուի իրրե առանձին կազմակերպութիւն, երբ անդամոց թիւը հինգէն պակաս է: Այդ սլարագային մնացած ընկերները կրնան դրացի մասնաճիւղի մը հետ գործակցիլ:

Յ0Դ. 43. — Լուծուած մասնաճիւղի գոյքը և դրամը կը գրաւուի Նահ. Վարչութենէն յանուն կուսակցութեան:

Յ0Դ. 44. — Երբ մասնաճիւղի անդամ մը ուրիշ քաղաք կը տեղափոխուի, պարտի իր մասնաճիւղի յանձնարարականով միանալ տեղւոյն մասնաճիւղին, իսկ եթէ հոն մասնաճիւղ չի գտնուի, իր յարաբերութիւնը պարտի պահել իր մասնաճիւղին հետ:

Յ0Դ. 45. — Եթէ ու եէ մասնաճիւղի պատկանող ընկեր անիրաւեալ կղգայ իր մասնաճիւղէն, պարտի նախ Նահ. Վարչութեան դիմել, երբ գոհացում չստանայ՝ կրնայ դիմել գումար-

ուելիք Պատգ . Ժողովին : Ապօրէն միջոցներու դիմող անկարգապահ ընկեր մը յանցապարտ կը նըկատուի :

ՊԱՏԺԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԵՐ

ՅՕԴ . 46 . — Կուսակցութեանս սկզբունքներուն դէմ գործող և գայթակղեցուցիչ ընթացք ցոյց տըւող ու է անդամ նախապէս կազդարարուի, ու յետոյ մասնաճիւղի վճիռով կը հեռացուի կուսակցութենէն՝ եթէ ազդարարութիւնը ապարդիւն մնայ :

ՅՕԴ . 47 . — Երբ մասնաճիւղի անդամ մը կը հրաժարի կամ կարտաքսուի, նոյն մասնաճիւղը պարտական է անմիջապէս տեղեկացնել միւս քոյր մասնաճիւղերուն, և պատճառաբանեալ նամակով մ'ալ ՚Նահ . Վարչութեան :

ՅՕԴ . 48 . — Անոնք որ գիտակցաբար կամ չարամտութեամբ կուսակցութեանս գաղտնիքները դուրս կուտան՝ իսպառ կարտաքսուին կուսակցութեան շարքերէն :

ՅՕԴ . 49 . — Եղեռնական ոճիրներով դատապարտուած անհատ մը՝ կուսակցութեանս անդամ չընդունուիր :

ՅՕԴ . 50 . — Անբարոյականութեան յանցանքով բռնուած անդամին արտաքսումը կը ծանուցուի «Զայն Հայրենեաց»ի միջոցաւ՝ ՚Նահ . Վարչութեան գիտութեամբը միայն :

ՅՕԴ . 51 . — Երբ ՚Նահ . Վարչութեան անդամ մը իր պաշտօնավարութեան միջոցին կուսակցու-

թեանս սկզբունքներուն դէմ գայթակղեցուցիչ ընթացքի մէջ գտնուի, անմիջապէս կը չէզոքացուի իր պաշտօնէն։ Վարչութեան միւս անդամները կը կազմեն ընկերական ատեան և առժամեայ կերպով կը դատապարտեն զայն, մինչև որ Պատգ։ Ժողովը այդ վճիռը վերաքննելով՝ կը վաւերացնէ կամ կը բեկանէ։

Յ0Դ. 52. — Դատապարտուող Նահ. Վարչութեան անդամ մը կ'արտաքսուի նաև այն մասնաճիւղէն՝ որուն կ'անդամակցի։

Յ0Դ. 53. — Նահ. Վարչութենէն հրաժարող կամ դատապարտուող անձնրու մասին կը ծանուցուի տեղային մասնաճիւղերուն և կեդր. Վարչութեան։


Յ0Դ. 54. — Նահ. Վարչութեան կարգադրութիւններուն դէմ հետող մասնաճիւղ մը առժամապէս կը դադրեցուի ամէն յարաբերութենէ մինչև Պատգ։ Ժողովը՝ որ քննելով խնդիրը վերջնական վճիռը կուտայ։

Յ0Դ. 55. — Երբ ու է անհատի թուրք կառավարութեան լրտես ըլլալը հաստատուի, այդ մասին պաշտօնական տեղեկագրութեամբ կը հաղորդուի կեդր. Վարչութեան, և վերջինս արժանը կը տնօրինէ և հարկ եղածը կը հաղորդէ Նահ. Վարչութեան։


ՎԵՐԱԲՆՈՒԹԻՒՆ

Յ0Դ. 56. — Ներկայ կանոնագրին վերաքննութիւնը կորոշուի Պատգ։ Ժողովոյ քուէից մեծամասնութեամբը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ


A 18897








329-14(4)
4-2



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0063176

An

